Կազմված է «—» «————————» 20 թ.
Բաղկացած է ———— թերթից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«————————————————» ՓԲԸ
Հիմնադիրների (միակ հիմնադրի)
«—» «————————» 20 թ. կայացրած
որոշմամբ
որոշում թիվ _____
տնօրեն՝ _____

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից

«—» «————————» 20 թ.

գրանցման համար ————————————————
ՀՎՀՀ————————————————

«————————————————————————————————»

Փակ բաժնետիրական ընկերության

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «————————————————————————————————————» Փակ բաժնետիրական ընկերությունը համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ:

2. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

3. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «————————————————————» Փակ բաժնետիրական ընկերություն

կրճատ՝ «————————————————————-» ՓԲԸ

ռուսերեն լրիվ՝ Закрытое Акционерное Общество «————————————————————————»

կրճատ՝ ЗАО «————————————————————»

անգլերեն լրիվ՝ «————————————————————» Closed Joint Stock Company

կրճատ՝ «————————————————————» CJSC

4. Ընկերության գտնվելու վայրն է՝ ————————————————————————

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

5. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է ——————(——————) դրամ, որը կազմում է ————— (————————————) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է ——————————————————— դրամ:

Բոլոր ——————————- բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև :

6. Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

7. Ընկերության յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

8. Սովորական բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերը մեկամսյա ժամկետում առաջնահերթ կարգով իրավունք ունի ձեռք բերել ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերն օրենքով սահմանված կարգով:

9. Ընկերության բաժնետերն իրավունք ունի իր բաժնետոմսերը օտարել ընկերության մեկ կամ մի քանի բաժնետերերի, ինչպես նաև երրորդ անձանց: Ընդ որում, մյուս բաժնետերերն ունեն այդ բաժնետոմսերը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք՝ ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնետոմսերին համամասնորեն: Եթե ընկերության մյուս բաժնետերերը չեն օգտագործել բաժնետոմսերը գնելու իրենց նախապատվության իրավունքը կամ այն օգտագործել են մասամբ, ապա ընկերությունն ունի այդ բաժնետոմսերը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք:

10. Երրորդ անձանց օտարման անհնարինության դեպքում բաժնետիրոջ պահանջով ընկերությունն ինքը պարտավոր է ձեռք բերել բաժնետիրոջ բաժնետոմսերը, այն իրացնել

մեկ տարվա ընթացքում այլ բաժնետերերի կամ երրորդ անձանց կամ որոշում ընդունել ընկերությանը պատկանող բաժնետոմսերի մարման ճանապարհով ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին:

11. Նախապատվության իրավունքի (այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

12. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո 6 ամսվա ընթացքում:

Ընկերությունը պարտավոր է տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարման մասին իր բաժնետերերին օրենքով սահմանված կարգով ծանուցել ժողովի գումարման օրվանից առնվազն 21 օր առաջ:

13. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությունները և որոշումներ ընդունելու կարգը սահմանվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

14. Ընկերությունում տնօրենների խորհուրդ չի ձևավորվում:

15. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ընկերության տնօրենը, որը գործում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իր իրավասությունների շրջանակներում, ինչպես նաև իրականացնում է նույն օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի «բ-դ» ենթակետերով սահմանված իրավասությունները: